

Բ.

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ՀԵՂԻՆԱԿԸ ԵՒ ԻՐ ԿԵԱՆՔԸ

Այս ձեռագրին հեղինակը ինքզինք կը կոչէ «նուաւս ծառայ Յոհաննէս վարդապետ եւ արքեպիսկոպոս Շամիրամակեթոս», այսինքն Վանի:

Կարգ մը տուեալներ ցոյց կու տան, թէ այս անձը ժամանակին արկածախնդիր եկեղեցականներէն Յովհաննէս Թիւթիւնճին է, որ ժէ. դարուն խառնուած է Կ. Պոլսոյ վէճերուն և ազգային կեանքին, և երկու անգամ (1663—1664 և 1665—1667) պատրիարքական աթոռը գրաւած, կարճ շրջաններով:

Յետոյ ան գացած է Վան, ուր կ'երեւի թէ ձեռք բերած է տեղւոյն առաջնորդութիւնը, նաև՝ Աղթամարի կաթողիկոսութիւնը:

Ինչպէս պիտի տեսնուի վարը, հետագային Վանը ձգած և թափառած է այլեւայլ տեղեր, ինչպէս նաև Եգիպտոս, ուրկէ գացած է 1678—1680ին Հապէշիստան:

1670էն 1683 իր գործունէութիւնը ցարդ կը մնար անձանօթ, վասնզի 1683ին զինք կը գտնենք Եւրոպա՝ Փարիզ, և գիտենք որ 1698ին գացած էր Տրապիզոն և հոն մեռած՝ 1703ին: